ՀՏԴ 941 (479. 243)
ԳՄԴ 63. 3 (2Հ) 43
Ա - Բ 706

Գրականագիտություն

ՎԻՊԱԿԱՆ ԱՐՑԱԽԸ ԵՒ ՐԱՖՖՈՒ «ԽԱՄՍԱՅԻ ՄԵԼԻՔՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ»

Զինաիդա ԲԱԼԱՅԱՆ

Բանալի բառեր. *Արցախ, գրականություն Արցախի մասին, Խամսայի մելիքությունները, ազգային, Ռաֆֆի, XVIII-XIX դարեր, քաղաքական դիրքորոշումները, հուսախաբություններն ու կորուստները:*
Ключевые слова: *Арцах, литература об Арцахе, Меликств Хамсы, национальный, Раффи, 18-19 вв, политические ориентации, потери и надежды .*
Key words: *Artsakh, Artsakh literature, Khamsa Melikdoms, national, Raffi, political orientation, educational movement, 18-19th centuries.*

“ЭПИЧЕСКИЙ АРЦАХ И КНИГА РАФФИ “МЕЛИКСТВА ХАМСЫ”
З. БАЛАЯН

Работа охватывает историческую эпоху, которая включает в себя политическую жизнь Меликств Хамсы 18-19 веков, двойные игры соседних стран, которые хотят завладеть политической ситуацией региона, внешние и внутренние взаимоотношения острую картину самоуправления, а так же освободительное движение арцахства, находящиеся под русским правлением, против персидского ига, политические ориентации, потери и надежды, культурно-просветительское движение, Шуши как “оазиса искусств” в Закавказье, представляя картину культуры, литературной богатой жизни Арцаха.

ARTSAKH OF EPIC AND «KHAMSA'S MELIKDOMS» BY RAFFI

Z. BALAYAN

The study covers the political life of Khamsa Melikdoms, the relations of Artsakh with neighboring states, its internal situation, loss of self-government, struggle against Persians and unification with Russia, political stance, educational movement, cultural and literary activity in the 18-19th centuries.

The study was carried out by the application of comparative, synthetic, hermeneutic, axiological and structural methods. The analysis focused on typological method that helped to disclose the characteristics of literature, education, history and culture.

Աշխատության պատմական ժամանակաշրջանն ընդգրկում է XVIII-XIX դդ. Խամսայի մելիքություններում քաղաքական կյանքի, տարածաշրջանում՝ պատմաաշխարհագրական լանդշաֆտում, քաղաքական իրավիճակին տիրապետել ցանկացող հարեւան երկրների երկդիմի խաղերի, արտաքին եւ ներքին հարաբերությունների, ինքնիշխանության կորստի սուր պատկերը, ապա ռուսական կայսրության ենթակայության տակ հայտնված արցախահայության ազատագրական պայքարը պարսից տիրապետության դեմ, քաղաքական դիրքորոշումները, հուսախաբություններն ու կորուստները, լուսավորչական-կրթական շարժումը, Անդրկովկասում Շուշիի՝ «արվեստների օազիսի» լուսավորության կենտրոն հանդիսանալը՝ ներկայացնելով Արցախում ծավալված ազատասիրական կյանքի հարուստ նկարագիրը:

Գրող Ռաֆֆին **«Խամսայի մելիքությունները»** շարադրելիս, վիպական հյուսվածքներ է դարձրել բանահյուսական, գրական ժանրատեսակներից շատերը՝ ավանդությունը, զրույցը, լեգենդը, բանաստեղծությունը, համեմատությունը, ասացվածքը, անեծքը, օրհնանքը, հակադրույթը, փոխաբերությունը, իմաստասիրությունը, ասույթը, նամականին եւ այլն[1] : Դրանց միջոցով ընդգծվում են արցախցու առօրյան, ինտելեկտը, ստեղծագործ ու պայքարող ոգին, երգիծելու տաղանդը, չարին հակադրվելու կամքը, ժամանակաշրջանի դիմագիծը, մելիքությունների գեղագիտական, քաղաքական նկարագիրը:

Նամականու հիանալի օրինակներ շատ կան. այդպիսիներից է Մելիք Բեգլարյան մելիք Աբովի՝ 1807թ. նոյեմբերի 23-ին գրած նամակը՝ ուղարկված Սանկտ Պետերբուրգ՝ Մինաս

[1] Տե՛ս Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Եժ, տասը հատորով, տասներորդ հատոր, Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 206-210, 209, 252, 269, 305, 306:

Լազարյանին, որում երեւում են հայ մելիքի կատարած գործերը, ճակատագրի որոգայթները, եւ որը համարյա տիպական է մնացած հարազատ մելիքների կերպարների, նրանց գործունեության բնութագրման համար: Պետրոս I կայսրի բարձրագույն հրովարտակի համաձայն վրաց Հերակլ թագավորը Բոլնիսի գավառը շնորհել է մելիք Աբովին, իսկ Լոռին՝ մելիք Զումշուդին:

Նամականու մի այլ հետաքրքիր նմուշ է մելիք Զումշուդի՝ 1806թ. դեկտեմբերի երկուսի գրած նամակը Սանկտ Պետերբուրգ՝ Մինաս Լազարյանին, ապա մելիքների նամակը (համանման բովանդակությամբ)՝ գրված նույն հասցեով[1]:

Վիպական վառ **համեմատության** օրինակ է հետեւյալ ժողովրդական **իմաստասիրությունը**. «Նրա (մելիք Զումշուդի- Զ. Բ.) հայրը անմատչելի Ղարաբաղի մեջ մտցրեց օտար ցեց, որը ուտելով, մաշելով խախտեց տեղային բոլոր հայկական իշխանությունների հիմքը և վերջապես կործանեց այն **հաստատուն շենքը**, որը դարերով կառուցված էր»[2] կամ համեմատական-փոխաբերական իմաստով հետեւյալ ընդհանրացումը. «Մելիք-Զումշուդը մտածում էր վերականգնել **խորտակված շենքը**»[3], այս հերոսին Ռաֆֆին բնութագրում է իբրեւ **կարդացած երիտասարդ,** ապա նաեւ ավելացնում հետեւյալ համեմատություն-մեկնաբանությունը, որտեղ տիպականացված է օտար տիրապետողի վայրագ սովորությունը եւ հայ պատանու արմատների կանչը. «Կարմիր արյունով ցողելով «սև այգին» (Ղարաբաղը- Զ. Բ.), ես նրան վարդի գույն պիտի տամ.... առավոտյան այն բոլոր դավաճանների գլուխներից հրապարակի վրա մի աշտարակ պիտի կազմել տամ, իսկ քո գլուխը Սաֆարալի-բեկ, այդ աշտարակի գագաթի վրա պիտի դնեմ.... »[4]:

Հետաքրքիր երանգ ունեն նաեւ հին հայոց **սովորություններից** մեջբերված հետեւյալ օրինակները. «Հայք վասն երկյուղի ելին ընդ առաջ նորա (Աղա Մամեդ խանի- Զ. Բ.) դասուք քահանայից, խաչիվ և խաչվառավ և ամենայն զարդուք .... արդյոք ո՞րք են դոքա, զի այդպես հրաշափառ զգեստուք և զարդուք գան ընդ առաջ մեր»[5] եւ ապա «... ի հայս կան հնական սովորութիւնք այսպիսիք, գնալ ընդ հառաջ թագավորաց ի մեծարանս և ի պատիվ երեսաց նոցա, առ ի շարժել ի գթածութիւն և ի խնամս վասն ողորմելի ազգին իւրեանց»[6]:

Բոլոր ժամանակների հայոց պատմության ամենասոսկալի չարագործների չարագործը պետք է համարել Իբրահիմ խանին, որի կերպավորումը Ռաֆֆին լավագույնս է վիպականացրել: Ներկայացնենք մի օրինակ, որ սահմռկեցուցիչ, **դրամատիզմով լի** պատմություն է եւ որի մեջ գլխավոր դերակատար Իբրահիմին խարդախության քուրմ կարելի է որակել:

Պարսկական եւ ռուսական միապետներից, իշխանավորներից մեծարված, երբեմնի հզոր իշխանի՝ մելիք Ավան խանի թոռ, Դիզակի իշխան մելիք Ավանյան մելիք Բախտամը, ով իբրեւ քաղաքական հանցավոր աքսորված էր Պարսկաստանի Արդավիլ բերդում, Աղա Մահմեդ խանի կողմից ներում ստանալով, վերադարձավ նախ Էջմիածին՝ իր չգործած մեղքերը քավելու, ապա հայրենիք՝ Աղա Մահմեդ խանի սպանությունից (1797թ.) հետո:

Քանի որ Դիզակի տիրապետողների իշխանությունը ամենավտանգավորն էր Իբրահիմի համար, ուստի, մելիք Բախտամին ինչ-որ մեղադրանքով Շուշի բերդում բանտարկելով, տմարդորեն նրան մահադեղով սպանում է ու սարսափելի որոգայթներ լարում նրա ժառանգների դեմ:

Ռաֆֆին, բնութագրելով մելիք Բախտամի որդու՝ մելիք Աբասի հատկանիշները, կերպարային գծերը, ձեռագիր պատմությունից քաղվածքներ անելով՝ գրում է. «Նրանց

[1] Տե՛ս նույն տեղում, էջ306-308 :
[2] Նույն տեղում էջ 260 :
[3] Նույն տեղում էջ 260 :
[4] Նույն տեղում, էջ 282:
[5] Նույն տեղում, էջ 283 :
[6] Նույն տեղում, էջ 283:

(Մելիք-Ավանյանների- Զ. Բ.) ազգի և սերունդների մեջ տակավին չէր ծնված, արդարև, մի այնպիսի տղամարդ պարթևական, հսկայազոր կերպարանքով և ահագնակերպ հասակով: Իր քաջագործություններով սկսեց հետզհետե նվաճել ոչ միայն իր բոլոր հայրենիքը, այլև մահմեդականների ազգը: Այդ պատճառով, տարածվելով սփռվեցավ նրա քաջության և անաչառ դատաստանների համբավը, որով պատժում էր հանցագործներին և վնասակար անձինքներին»[1]:

Մելիք Աբասը իր դատավճիռները կատարում էր առանց արծաթասիրության և կաշառքի. յուրաքանչյուր մեղավոր, մահապարտ իր պատիժը ստանում էր ըստ կատարած մեղքի չափի և պատիժը կրում էր հասարակության աչքին ի տես, որպեսզի բոլորին դաս լինի:

«Նրա քաջագործությունների համբավը,- նշում է հիշատակագիրը,- շատ վաղ հասել էր մեծ բռնավորի (Իբրահիմ-խանի) ականջներին.... Նրա նպատակը այն էր, որ դարձնի նրան հայկական դավանությունից մահմեդական դենին.... »[2] :

Իբրահիմը բազմաթիվ որոգայթներ լարերով մելիք Աբասի դեմ՝ չհասավ իր նպատակին, քանի որ սպանված հոր փոխարեն իշխում էր նրա հաջորդը կամ տոհմակիցը, ուստի ավելի սարսափելիի մասին մտածեց:

Մելիք Աբասը մի անգամ գնացել էր Ցոր գյուղ՝ մի քրեական գործ քննելու: Ստիպված գիշերեց քահանայի տանը: Գիշերը Իբրահիմի վարձած մի խումբ ձիավորներ հարձակվեցին քահանայի տան վրա եւ մելիքին քնած ու անպատրաստ գտնելով՝ սրահարեցին՝ նրա մարմինը վերածելով կտորների:

Մելիք Աբասի մարմին-նշխարները բերվեցին Տող բերդը եւ երբ եկեղեցու մեջ պատարագ էր մատուցվում ու պատրաստվում էին նրա թաղման հանդեսը կատարելու, Իբրահիմ խանի գինված վարձկանները ներխուժեցին եկեղեցի եւ փորձեցին հափշտակել իշխանի մարմինը՝ սուտ պատճառաբանելով, թե հանգուցյալը կենդանության ժամանակ խոստովանվել էր մահմեդական կրոնն ու նրան պետք է թաղել ոչ քրիստոնեական ծեսերով: Թե՛ ժողովուրդը, թե՛ մելիքի բարեկամները զայրույթից խանի մարդկանց ջարդ տվեցին, շատ սպանություններ կատարեցին ու քշեցին նրանց: Լուրը հասավ Ճուշի՝ Իբրահիմ խանին: Եվ, երբ Իբրահիմը զորք ուղարկեց Տող, հանգուցյալի թաղման արարողությունը արդեն կատարված էր: Ուղարկված զորքը նորից փորձեց քանդել գերեզմանը, նորից արյունահեղություն եղավ, ու քանի որ հայերը չէին սպասում այդպիսի վճռական հանդգնություն ու պատրաստ չէին նման բռնության, ուստի հաղթվեցին:

Տող բերդի եկեղեցու գավթում ամփոփված մելիքի հաղթված նշխարները հանեցին իր պապենական տոհմային գերեզմանատնից ու թաղեցին մահմեդականների գերեզմանատանը:

Այդ բարբարոսության նպատակը մեկն էր. «Այն, որ հետո Իբրահիմ-խանը,- գրում է Ռաֆֆին,- առիթ ունենա ասելու հանգուցյալի ժառանգներին, թե ձեր հայրը մահմեդականների ու մահմեդականության մեջ մեռավ, դուք ևս պետք է ընդունեք նույն կրոնը»[3]:

Ավազակաբարո Իբրահիմը հասավ իր նպատակին՝ մելիքի ժառանգներին անխնայաբար կրոնական հալածանքի ենթարկելով:

Վրա հասած դառը դժբախտություններին ավելացան սովն ու ժանտախտը:

Մելիք Աբասի որդին՝ մելիք Ղահրամանը (Բաղր բեկ) իր ժողովրդի մի մասով գաղթեց դեպի Վրաստան:

Արցախի սերնդեսերունդ շարունակվող միաբան, կամային բարձր հատկանիշներով օժտված հարազատ մելիքների մաքառումների, քաջագործությունների, հերոսացումների նպատակը, հայրենիքը պահպանելու իղձը, ազատ, անկախ, ինքնիշխան

[1] Նույն տեղում, էջ 287-288:
[2] Նույն տեղում, էջ 288:
[3] Նույն տեղում, էջ 289 :

մնալու ու այդ սրբազան ուխտը, պարտականությունը պահելու օրինակները բազում են, զուգահեռ նաեւ անմիաբան մելիքների վարքի օրինակները՝ պատմական եւ վիպական երանգներով լի. վտանգավոր եւ ցավալի փաստ՝ մերօրյա ռեալությամբ ու դասեր քաղելու պարտադրությամբ:

Այդ ուղղությամբ հաճախակի օտար երկրների բարձրագույն մարմինների՝ արքաների, կայսրերի, շահերի օգնությունները խնդրելու փաստերը այդպես էլ դարեր շարունակ իրենց պտուղները չտվեցին, եւ այսօր էլ **նույն քաղաքական իրավիճակն** է տիրում Արցախում. ընդհակառակը՝ օտարներն իրենց որդեգրած անբարո քաղաքականությամբ ծառայել ու ծառայում են միմիայն իրենց պետական ու սեփական շահերին՝ արցախահայության արդարացի պահանջատիրությունը, պետականության ու ինքնորոշման իրավունքը միլիոն անգամ ոտնահարելով:

Այդ ամենից պետք է մեկընդմիշտ հրաժարվել եւ ապավինել միմիայն սեփական ուժերին, քանզի այդ վտանգավոր ճանապարհներին կորցրել ենք մեր ազգի ընտրյալներին՝ նրա սերուցքը, անշուշտ, անօգուտ ու անչափ վտանգավոր Հայոց ազգային ճակատագրի համար թե՛ անցյալում, թե՛ այսօր, թե՛ ապագայում:

Արցախի մելիքների մաքառող սերուցքը իր նպատակաուղղվածությամբ՝ եվրոպամետ, ռուսամետ, պարսկամետ, ամերիկամետ կողմնորոշումներով, զարմանահրաշ, անպատմելի օրինակներ է արձանագրել ու արձանագրում մեր պատմության, հերոսական մաքառումների մեջ՝ միշտ թարմության, արդիականության կնիքը իր ուսերին էպոպեա է դարձել, եւ այսօր էլ այն շարունակվում է:

Պարզվում է՝ այդ բոլոր ջանքերը ապարդյուն էին եւ վտանգավոր. այսօր էլ նույն անհուսալի, անմարմին ու անողոք հույսերով մենք մեր հանճարի ոսկեգեղմը զոհասեղանին ենք դնում, գոնե պատմության ապտակներից, հեգնանքներից, որոգայթներից դասեր առնենք, ճանաչենք մեր ներսի ու դրսի թշնամիներին, ազգովի ապավինենք միմիա՛յն մեր սեփական քաղաքական, ռազմական, տնտեսական, մշակութային, գիտական ուժերին: Այսօր վերջնականորեն սթափվենք ու որոշում ընդունենք՝ հենվել ինքներս մեզ վրա ու մի՛ ոգի, մի՛ մարմին դարձած, մի՛ գաղափար որդեգրած, բռունցքվա՛ծ ու հեղեղվա՛ծ՝ ազգովի կերտենք մեր երազի, հաղթության ներկան եւ ապագան՝ Ազատ, Անկախ Հայաստանը:

Քանի-քանի անգամ թշնամիները խորտակվեցին հայության-արցախահայության հզոր հարվածների տակ, քանի-քանի անգամ հավատակիցները հայերին տվեցին առաջին հարվածները՝ փորձելով իսպառ վերացնել «հայություն» պատմական, էթնիկական միավորը, հասկացությունը. բավ չէ՞ դասեր չառնել...

Արցախահայությանը, մելիքությունների խլված ինքնիշխանությունը, ազատությունը անձնվիրությամբ պաշտպանելու, այն բազկի ուժով ձեռք բերելու դասերը, սերնդեսերունդ մաքառողների օրինակները լիուլի եւ ապշեցուցիչ են: Ահա ռուսամետ կողմնորոշում ունեցող նվիրյալի, Աբաս Միրզայից գերված Մելիք Բեգլարյան մելիք Աբովի որդու՝ քաջակորով Ռոստոմի (Առստամ) բեկի ու նրա ստեղծագործական տաղանդի մասին ինչ է գրում Ռաֆֆին. «Ղարաբաղի հերոսը որքան հաջողակ էր զենք գործ ածելու մեջ, նույնքան հմուտ էր և բանաստեղծության մեջ» [1]: Հերոսի ու նրա բանաստեղծական քանքարի անդրադարձ կա նաեւ Ա. Բեկնազարյանի «Գաղտնիք Ղարաբաղի» բացառիկ գրքի մեջ, որտեղ մելիք Աբովի որդին Առստամ բեկ է անվանված:

Բանաստեղծության շարադրանքը մեզ հուշում է, որ այն նոր գրիչ վերցրած մշակի գրական արտադրանք չէ, այլ հայ մարտիկ-բանաստեղծի՝ մի հզոր անհատականության ու նրա ռազմակոչի, ազգասիրական մտքի թռիչք՝ հայրենիքի անկախության պայքարին նվիրված, քնարական շնչով հյուսված ստեղծագործություն, հերոսի պոետական զենք՝ աննվաճ ոգով, պաթետիկ ու լիրո-էպիկական շեշտով շաղախված մի քերթված: Առստամ բեկը Աբաս Միրզային ամենի ու մահագույժ վայրագ, ժանտ դահիճ է անվանում, նշելով.

[1] Նույն տեղում, էջ 305 :

Սէր հայրենեաց ի թշնամեաց ձեռս մատնեաց....[1]:
Ապա խորին ափսոսանքով քաջանուն հերոսը վերջաբանում է իր խոսքը հետեւյալ կերպ.
Միայն սգամ. զի կապեալ կամ. թե մյուս անգամ հրացան, սուր իմ
Ի ձեռս ունիմ,- զբազուկս իմ ձեռ ցուցանեմ....[2]:

Մելիքների, արցախահայության համառ ընդվզումները, պայքարը, հայրենիքի անկախությունը, իրենց պապենական իրավունքները պահպանելու, իրենց հողի վրա ապրելու բնական իրավունքները հօդս ցնդեցին.... Վրա հասած սովը, Ղարաբաղի խանների հալածանքները, կրոնական խտրությունները, Ղարաբաղի հայոց գաղթականությունը մելիքներին ակամայից հեռավոր ափեր տարան, հայրենի երկրի կեսից ավելին դատարկվեց: Բուն հայոց երկրում եւ օտար ափերում հրովարտակներով շնորհած, հաստատված, խլված, գնված հողերը՝ Արեւմտյան Հայաստանը, Կիլիկիան, Ատրպատականը, Բոլնիսը, Լոռին, Բորչալուն, Ջավախքը հայ արքաները, մելիքները, իշխանները շենացրին: Այսօր այդ հողերը եւս գերության մեջ են, թիզ առ թիզ թշնամին մեզանից խլում, թալանում է մեր ազգային պատկանելիքները, իսկ մենք «ոչինչ» ենք համարում մեր հողերը, թողնում ենք, որ մեզ կողոպտեն, անհայրենիք դարձնեն. մեր վզից կախված օղակը մեր ձեռքով սեղմում ենք մեր պարանոցին. կշնչատվե՞նք: Օտարը հրճվում է հաստատ: Մենք թույլատրում ենք բորենիներին մեզ հոշոտել այն դեպքում, երբ մեր հողերը մեր մարտիրոսված որդիների արիության ու արյան գինն են հիշեցնում, պատմության հեգնանքն ու փիլիսոփայությունը, ազգային գաղափարախոսությունը, հայրենիքի ամբողջականության վտանգված լինելը, նրա վերջնական կորստի ստվերը. ո՛չ, այդ թշվառությունը սազական չէ Արցախ աշխարհին. նա կարող է իր ազատությունը նվաճել ու պահպանել, իր բազկի ուժով հետ վերադարձնել իր գերեվարված պատմական հողերը, սրբությունները:

Վիպասան Ռաֆֆու գրչի տակ վերակենդանացել են Արցախի մելիքությունների 200-ամյա պատմությունը, հոգեւոր եւ աշխարհիկ առաջնորդների պատմական ու վիպական կերպարները՝ տիպական հանգամանքներում անձնավորված հատկանիշներով, որն անչափ ուսանելի է ու իր խորքում արդիական ոգով դասեր ունի անթեղած :

Արցախի՝ սերնդեսերունդ շարունակվող մելիքական տների, իշխանական առաջնորդների, Աղվանից կաթողիկոսական տան ներկայացուցիչների, հակաթոռ հոգեւոր գործիչների կերպավորումը ներկայացված է «Խամսայի մելիքությունների» շարադրանքի բոլոր գլուխներում, միաբան ու անմիաբան մելիքների կերպարների բնութագրումներում՝ շոշափված վիպական խիտ երանգներով, արցախահայության կյանքի անհանգիստ, վտանգավոր բաբախյունով, արդիական քաղաքական հարցադրումներով, XIX դ. Արցախի քաղաքական ճակատագրի բացահայտումներով:

Արցախի ժողովուրդը իր տոհմիկ առաքինություններով է կերպավորված, անվախ, քաջ, հերոսական, իր բարքերին, սովորություններին հավատարիմ, հայրենի հողին պինդ մերված որդիներով, հաճախ անբարենպաստ պայմաններից ելնելով (սով, ժանտախտ, կրոնական հալածանքներ, երաշտ)՝ գաղթի ենթարկված ու հազար ու մի հարվածների տակ կքած: Նա միաժամանակ հայտնի է իր ամուր, աներեր կամքով, քնարական ու նաեւ կոշտ ու փխրուն հոգեբանությամբ, իր հավատին ու հայրենի հիշատակներին կառչած, իշխողների մանր-մունր վեճերին, արյունահեղ ընդհարումներին, պատերազմի արհավիրքներին ենթակա, բայց միշտ պայծառ պահելով հայրենի երկրի պատկերը:

Երկրի արմատական տերերը, այսպիսով հայոց հինգ մելիքական տների ներկայացուցիչներն էին՝ Գյուլիստանի Մելիք Բեգլարյանները, հորոց որդի (Ղարա Յուզբաշին-սեւ հարյուրապետ -սեւ Աբովը, մելիք Բեգլար I (հիմք դրեց Գյուլիստանի մելիքների իշխանությանը, կաղ Աբովը, մելիք Յուսուֆը, մելիք-Բեգլար II եւ ուրիշներ), Ջրաբերդի Մելիք-Իսրայելյանները (մելիք Իսրայելը, որդին՝ մելիք Եսային, Ալլահ Ղուլի

[1] Նույն տեղում, էջ 306 :
[2] Նույն տեղում, էջ 306 :

սուլթանը, մելիք Աթամը, մելիք Մեջլումը), Խաչենի Հասան Ջալալյան մելիքները (Մուլքի բեկը, խելացի, ճարտարախոս մելիք Գրիգորը, մելիք Ալլահվերդին), Վարանդայի իշխանները (մելիք Բաղին, մելիք Հուսեինը, մելիք Հովսեփը, անմիաբան Մելիք Ծահնազար II, մելիք Ջումշուդը), Դիզակի Մելիք Ավանյանները (մելիք Ավանը (Եգանը), Ղուկաս վարդապետի որդին, որոնք մի-մի ավատատերեր էին, իշխան-նախարարներ՝ իրենց հող ու ջրին սիրահար, իրենց ինքնիշխանության գաղափարին ու նրա պահպանմանը հավատարիմ, իրենց տոհմական սկզբունքներին, սովորություններին, հարաբերություններին՝ ականջալուր, նախանձախնդիր, որոնց ժողովուրդը սիրել ու պատմություններ է վիպել նրանց քաջագործությունների մասին, հաճախ՝ մեղմ երգիծել:

Հայրենիքին հավատարիմ եւ անհավատարիմ իշխանները առանձին հարցերի շուրջ ունեցել են իրենց մանր-մունր վեճերը, անհամաձայնությունները, անմիաբանությունը, որը երբեմն վտանգավոր հետեւանքներ է ունեցել, արյունալի կռիվների տեղիք տվել, օտարների ջրաղացին, այսպիսով՝ ջուր լցրել:

Միաբան մելիքների կերպարների քննությանը զուգահեռ Ռաֆֆին ներկայացրել է նաեւ անմիաբան մելիքներին, որոնցից շատերը, դաշնակցելով Ղարաբաղի խանների հետ, ջլատել են մելիքների դիմադրողականությունը, պատճառ հանդիսացել հայրենիքի անկախության, ինքնիշխանության կործանմանը: Ռաֆֆին վիպական հետաքրքիր անցումներով է ներկայացնում հերոսներին, բնութագրում նրանց երկվություններով լի հոգեբանությունը, զուգահեռ ներկայացնում Ղարաբաղի քաղաքական ճակատագիրն ու վիպաէպիկական նկարագիրը:

Այդ ֆոնի վրա վիպասանը ներկայացնում է նաեւ հոգեւոր դասն իր ներքին պարույրներով, տալիս թե՛ պատմական, թե՛ վիպական նկարագիրը, Աղվանից կաթողիկոսական տան ներկայացուցիչների վարքը, հավաթոռ հոգեւոր կենտրոնները:

Ռաֆֆին, իր նյութին հավաստիություն տալու համար, պատմական կերպարներին անդրադառնալիս, միաժամանակ ստեղծագործական երկունք է ապրել՝ նյութի վիպական յուրացումը դարձնելով ժամանակի մարդու ներքին բարդությունն արտահայտելու գլխավոր պայմաններից մեկը, մի կողմից էլ՝ լուծելով շարադրանքի մեջ առկա գեղարվեստական ոճի խնդիրը: Այս դիտանկյունից առկա է դառնում գրողի անհատական ոճի ու ժամանակի ոճի մեկնողական դաշտը, այդ զուգահեռի վրա Արցախի մելիքների կերպավորումների անհատական գծերը, ներքին մարդու հոգեբանական զարգացածության աստիճանը:

«Խամսայի մելիքությունների» շարադրանքից երեւում է վիպասանի՝ մելիքության ժամանակների իրականության սուր զգացողությունը, ինչը բացատրվում է շոշափած նյութի հանդեպ նրա խորը իմացությունները, աղբյուրների հանդեպ ցուցաբերած քննողական վերաբերմունքը, որի արդյունքում տեսանելի է դառնում մելիքության ժամանակների Արցախի հասարակական, քաղաքական կյանքի պատկերը, ժամանակի տագնապների հանդեպ Ռաֆֆու քաղաքացիական խիզախումը՝ ճիշտ ներկայացնելու դրանց դրամատիզմով լի պատմավիպական նկարագիրը, ինչը հնարավորություն է տվել վիպասանին իր խոսքը դարձնելու թե՛ համոզիչ, թե՛ գեղարվեստորեն հագեցած: Նման դիտանկյունից է բացահայտվում հեղինակային ընկալումների եւ ընդհանրացումների որոշարկված համակարգը՝ Խամսայի մելիքությունների երկու դար տեւած պետականության առկայության եւ նրա կորստի նկարագրությամբ: Գրողը այն ներկայացրել է պատկերային կառույցում:

Այսպիսով, Ռաֆֆին հայտնվում է արցախահայության ազգային ճակատագրի ամենաթեժ ու ամենաառողբերգական հանգուցակետում՝ «....աշխարհին պարզելու հայոց ոգու գաղտնարանը»[1],- ինչպես նշում է Ս. Արզումանյանը- ցույց տալու համար Արցախի մելիքների բազուկի զորության առասպելական հմայքն ու հանճարի չափը՝ զուր գործադրված, եւ թե որքան դառնացած է իր պաշտած հայրենիքի՝ հայոց Արցախ աշխարհի երբեմնի առաքինություններն ոտնահարված ու անկախությունը, պետականությունը

[1] Արզումանյան Ս. Սովետահայ վեպը, հ. 5, էջ 277:

կորուսված տեսնելու մտքից, որն, անկասկած, ունի ներկաներիս ուղղված սաստող եւ ուսանելի պատմության, էթիկայի եւ գեղարվեստի, պետականության, քաղաքականության դասեր:

Հայ գրականության ներկայացուցիչները, նկատի ունենալով ժողովրդի ճակատագրի բարդ յուրահատկությունները, տարբեր ժամանակներում նրա պատմության բացահայտումները կատարելիս, եւ իրենց երկերը գրելիս ո՛չ միայն հենվել են ժողովրդական բանավոր հյուսվածքների, ավանդությունների տված տեղեկությունների, ա՛յլեւ պատմության հավաստի փաստերի հիման վրա հավաքված գրավոր ու բանավոր եւ այլ աղբյուրների վրա:

Սկսած մեհենական պատմագիր Օղյումպ Քուրմից, պատմահայր Մ. Խորենացուց մինչեւ արդի ժամանակաշրջանի ստեղծագործողներ, հայ գրականության մշակները այդ կերպ են ստեղծել-գրել իրենց պատմությունները: Հեթանոսական շրջանի առասպելներին, վիպական կտորներին անդրադառնալիս Մ. Խորենացին դրանք բաժանել է երկու խմբի՝ պատմական եւ առասպելական հիմք ունեցողներ:

Վիպականը՝ աներեւակայելին, անհավանականը, ստեղծագործական տարրերով ստեղծվածը, ժողովրդական ասացումներով են հատկանշվում, դառնում սքանչելի հյուսվածք հայ մարդու պայքարի, հավատալիքների, սովորությունների, բանաստեղծական լուծումների, կրոնական պատկերացումների մասին ստեղծված կտորները:

Եվ եթե գիտությունը որեւէ երեւույթի իրողության չափը, հավաստիությունը պետք է հաստատի, ապա կարեւոր գործոն է դառնում պայմանականորեն ճիշտ դիտված երեւույթը: «Հայտնի բան է, միայն ժողովրդական ավանդությունների վրա հիմնվելով, շատ դժվար կլիներ կազմել մի քանի դարերի շարունակ պատմությունը,- գրում է Ռաֆֆին,- ժողովուրդը շատ անգամ շփոթում է անցքերը. մեկի գործողությունը մյուսին է վերաբերում, և ամենադժվարինն այն է, որ ժամանակագրական և տոհմագրական ճշգրտություններ չէ պահպանում...: - Հենց այս ճշմարտությունից ելնելով է, որ շարադրանքին հավաստիություն տալու համար փաստացի, գրավոր աղբյուրներն են օգնության գալիս,- ժողովուրդը ունի իր լեգենդները, իր իդեալները, իր սիրած հերոսները, որոնց ընծայում է նա այնպիսի մեծագործություններ, որոնք նրանց կատարածը չէին կարող լինել: Օրինակ,- շարունակում է վիպագիրը,- ինձ շատ անգամ պատահում էր նկատել, որ միևնույն պատմական իրողությունը ամեն մի գավառի ավանդությունների մեջ ընծայում էին նույն գավառի մի հայտնի հերոսին....Բայց պատմական փաստը դարձյալ մնում է իբրև իրողություն, միայն հարկավոր է նրա կատարող տերը գտնել»[1]

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Եժ, տասը հատորով, տասներորդ հատոր, Երեւան, Հայպետհրատ, 1959 :

Տեղեկություններ հեղինակի մասին.

Զինաիդա Բալայան, դոցենտ, բ. գ. թ., ԱրՊՀ, գրականության եւ լրագրության ամբիոն

E-mail: zinaida_araqelyan@mai

Հոդվածը տպագրության է երաշխավորել խմբագրական կոլեգիայի անդամ, բ.գ.դ. Ս.Ա. Խանյանը:

[1] Ռաֆֆի, Խամսայի մելիքությունները, Եժ, տասը հատորով, տասներորդ հատոր, Երեւան, Հայպետհրատ, 1959, էջ 378-379 :